այս օր խճուղի շինուելու վրայ է և այս ճանապարհն ի Պայազիտ՝ ուստի ի Պարսկաստան կը տանի։

Կան բազմաթիւ ժողովրդական ճանապարհներ, որոց զլխաւորներն են, ի Խնուսայ եկող ճանապարհն, որ Բրճոյի կրճով դաշտս կիջնայ, Խաստուր Մօլլա—Սիւլէյման և Ղօփուզ գիւղերով կանցնի Ռուսական սահմանը, ուստի ի Կարս. երկրորդն է Մշոյ, Գուլանխէ և Մանազկերտէ եկող ճանապարհն, որ Անդափէ և Ղլիճ—Կէտուկէ անցնելով դաշտիս առաջին գիւղն Ըլկանի (ի հարաւոյ) կիջնայ, Թօփրաք-գալէով, ուստի Բօղթէփէով և Աղբուլախով կանցնի Կաղզուան, ուստի Կարս։ Երրորդն է Արճէշի ևն. ճանապարհն՝ որ Բաղնոցէ և Խամուրէ Գարաքիլիսէ մտնելով՝ ուստի Մերկեղերի բարձունքը եղած Զամչէ լեռնով ի Կաղզուան և Ախտով կամ Սինակ լեռներով ի Կողբ, ուստի Իգդիր և Վաղարշապատ ու Երևան։ Չորրորդն է Վանայ ճանապարհն, որ Դիատինից անցնելով Բարթոզ լեռներու զագաթով Կողբ, ապա Իգդիր կիջնայ։

Շ Ա Հ-Ե Օ Լ Ի

Շահ-եօլին Շահի ճանապարհն է. ըստ ոմանց Սուլթան Մուրատի զաղտնի ճանապարհն է, որ Ատրպատականէ, Խոյայ և Մակուայ միջի լեռներէ կանցնի, կը մտնէ Ալատաղ, կերկարի Պայազիտի հարաւային լեռներու զագաթից դէպ ի յարևմուտս, կտրէ, կանցնի Մլղրէժ և Իփեկայ կետուկն, և Դիատինի արևելեան հիւսիսից կը բարձրանայ Բաղրևանդայ հիւսիսային լեռնաշղթային զագաթն և շղթայի ուղղութեամբ լեռնէ